ուրս ԺԶ։ Եւ հասեալ ի Տուիթնուրան[20] քաղաք բազում յաշխատութեամբ. և անտի գտի ֆռանկ սարկաւագ միր և ընկեր եղեւ մինչեւ ի Կաստիլար[21] քաղաք. և անտից ի մեծն Փոթեր[22] քաղաք. և անտի էր Քրիստոսի պատանքն որ արժանի եղաք տեսանելոյ, և այլ ընկեր չգտայ և մնացի միայն։

Եւ ապաւինեալ ի սուրբ Յակոբու սուրբ աղօթն և ամենակարողն Աստուած. և յելեալ բազում յաշխատութեամբ հետիոտն դիմել ելեալ գնացի բազում քաղաքաւ, ի հասաւ ի Կասնկոնիայ[23]. և անտի ի Կաստիլիայ[24], և անտի Ապզնիայ[25]. և անտից բազում աշխատութեամբ միայնակ զԱստուած յունէի յօգնական։ Եւ եկեալ հասի յաշխարհն Պայունայ[26] որ և քրիստոնեայքն մեծ սիրով ընդունեցան և հարկեցին զչափն ի վեր. և կեցաք վեց յօր և ընկեր չգտայ ապաւինեալ Աստուած և ի սուրբ Յակոբ. և յելեալ դիմեցին բազում յաւուրս աշխատութեամբ յաշխարհն Պիսկային[27] որ է ձկնակերաց յաշխարհն, Պիսկայ քաղաք յեզր ծովուն։ Եւ անտից Սան Սեբաստիան[28] որ սպիտալին տիրն այրն և կինն խիստ անչափ սէր արարին և պահեցին զիս հինգ յօր յայն քաղաքն, և երկու երեք անգամ ժողովք արին ինձ. և այն քաղաքին սիրուն մարդ չիտեսայ։ Եւ անտից ի ծովուն յափն ի ներս գնացի բազում յաւուրքք և ընդ որ գնացի խիստ հարկեցին հինգ վեց քաղաք. և անցեալ գնացի բազում յաւուրքք և հասայ ի մեծն Փոթընկալեթ[29] և կեցայ չորս յօր. և ելեալ միայն և հասայ Խանթանտէր[30]։ Եւ անտից Սանթելանայ[31] և անտից Սանմիսան[32] եզր ծովուն և շատ սէր արարին ինձ. և ելեալ անտից և եկի ի Սան Սալվաթուր[33] և անտից ի Պետանց[34] քաղաքն. և անտից բազում յաշխատանօք զԱստուած ունէի յօգնական յոյժ աշխատեալ և նուազեալ հասայ ամենօրհնեալ և փառաւորեալ և տիեզերալոյս տաճարն և ի գերեզման սուրբ Յակոբայ, ուր սուրբ մարմին է ի քաղաքն Կալիցայ[35]։ Եւ գնացեալ մտի ի գերեզմանն անկեալ ի վերայ երեսաց իմոց երկիրպագեցի և մեղաց թողութիւն խնդրեցի ինձ և ծնողացն և երախտաւորացն և բազում արտասօք զփափաք արտիս իմոյ կատարեցի. որ է եղեալ ի մէջ սուրբ սեղանին դեղին պղնձէ տապանին, և երեք կուղպաքով փակած, և զինքն մարդապէս շինած է ի վերեւ սուրբ սեղանին, որ նստել է աթոռով և թագ ի գլուխն. և ի վրան փայտէ գումպեթով կապած. և եկեղեցի խաչանման է մեծ և փառաւոր գումպեթով, և երկու դեհն զանկակպուրճներ և եկեղեցին երեք տապաղայն է մէկ կամարի վրայ է, և չորս դուռն ունի. հարաւայ դիհի դուռն ի դուրս կելնես, մեծ շատրաւան մի կայ և սպիտակ փողխողներով նստել է և իւր նշաններն և հլուներն զինչ որ ընդոեն ի հոն կու ծախուի։ Եւ յարեւմտից դրանն յառջեւն ի ցած ալուի աղբիւր կայ. և յարեւելից դրանն ի վեր և Քրիստոս է նստեալ յաթոռով յԱդամայ մինչեւ ի կատարած աշխարհի զինչ եղեր է և զինչ որ լինելոց է զամեն նշանած է։ Եւ զայլ անբաւ վայելչութիւն, ո՞վ կարէ պատմել։

Եւ կեցայ ՁԴ (=84) յօր. այլ չի կարացի կենալ, թանկութիւն էր. և ի մեղաց թողութիւն խնդրեցի և իմ ծնողաց և ամենայն երախտաւորաց իմոց։ Եւ ուր մարմինն էր սուրբ, հաստ երկաթով փանճարայած է, և այլ շատ փառաւորութիւն կայ սուրբ Յակոբայ, բայց չի կարացի գրով արկանել։ Առի զօրհնութիւն սուրբ Յակոբայ և ելեալ դիմեցի յեզր աշխարհի յեզր Աստուածածինն որ սուրբ Պողոս յառաքեալն իւր սուրբ ձեռօքն շինել, որ ֆրանկներէն ասեն՝ Սանթայ Մարիայ Ֆենէս տիռնայ[36]. բազում աշխատութեամբ և բազում վիշտ քաշեալ ի ճանապարհին և հանդիպեալ բազում ֆնասակար գազանաց, և հանդիպեցաք վաքներին? մեծ և ֆնասակար գազանին, որ և ասացին թէ 20 հոգի եարախով չի կարել անցնել, դու ի՞նչպէս ազատեցար։ Եւ եկեալ հասի յաշխարհն Հոլանի[37] որ և նորա այլ ձկնակերք են և նոցա լեզուն չգիտէաք. բայց խիստ կու հարկէին զմեզ և անէ ի տուն կու տանէին և կու զարմանային թէ ոնց